ՎԱՀԱԳՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Քրեական դատավարության նպատակը դատավարության խնդիրների իրականացումն է, գործով դատվճռի (որոշման) կայացումն է: Քրեական դատավարության խնդիրներն իրականացնելու համար նախ և առաջ պետք է պարզվի, թե ի՞նչ է տեղի ունեցել իրականում, ո՞վ և ի՞նչ պայմաններում է կատարել հանցանք: Քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը, նրա մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է պարզել միայն մեկ ճանապարհով՝ ապացուցման միջոցով: Այդ իսկ պատճառով, գործով որոշման կայացմանը միշտ նախորդում է ճանաչողական բարդ գործընթաց, որը կոչվում է ապացուցում: Ապացուցումը ծանրակշիռ տեղ և դեր ունի քրեական դատավարությունում: Գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումից, այսինքն՝ ապացուցումից է կախված քրեական գործով կայացված որոշումների ճշտությունը (օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանված լինելը): Ուստի ապացուցումը քրեադատավարական գործունեության անհրաժեշտ և հույժ պատասխանատու բաղադրատարրն է: Պատահական չէ, որ դատավարական գործողությունների մեծամասնությունն ուղղված է ապացույցների հավաքմանը, ստուգմանը (հետազոտմանը) և գնահատմանը:

Ապացուցումը ճանաչողական գործունեություն է՝ այն իրականացվում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով: Ապացուցումը քրեական դատավարության նորմերով կարգավորվող և այդ շրջանակներում իրականացվող գործունեություն է գործով ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Ապացուցումը քրեական դատավարության մասնակիցների հիմնական գործունեությունն է, իրականության ճանաչման յուրօրինակ ձև: Ընդսմին, նկատենք, որ ապացուցումը (գործով ճշմարտության բացահայտումը) միջոց է քրեական դատավարության խնդիրների իրականացման (գործով վերջնական որոշման կայացման համար)[1]:

---

[1] Սույն հիմնահարցն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն: Քրեադատավարական ապացուցման նպատակը ճշմարտության բացահայտումն է,

Քրեադատավարական ապացուցումը բարդ և բազմաբնույթ գործունեություն է: Ապացուցման գործընթացն ունի երեք բաղադրատարր (փուլ) ապացույցների հավաքում, ստուգում (հետազոտում), գնահատում: Այս սխեման համարվում է դասական և ունի գիտագործնական զգալի արժեք[2]:

Ապացուցման գործընթացում դատավարության յուրաքանչյուր մասնակցի ապացուցողական գործունեությունն ինքնանպատակ չէ, այլ միշտ հասցեագրված է որևէ այլ մասնակցի կամ մասնակիցների:

Յուրաքանչյուր քրեական գործով իրականացվող ապացուցման գործընթացում որոշվում է ապացուցման առարկան[3]: Ապացուցման առարկան գործով ապացուցման ենթակա հանգամանքների (տվյալների) ամբողջությունն է: Այսինքն «ապացուցման առարկան քրեական գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակն է»[4]: Ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները չպարզելը (չապացուցելը) նշանակում է գործի ոչ լրիվ և միակողմանի (թերի) քննություն դրանից բխող դատավարական հետևանքներով:

Քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը սահմանված է օրենքով (քր. դատ. օր., հոդվ. 107): Այդ հանգամանքները քրեական դատավարության իրավունքի գիտության մեջ անվանվում են նաև ապա-

---

այսինքն իրականության պարզումը: Հարց է ծագում. ճշմարտության բացահայտումն արդյո՞ք քրեական դատավարության վերջնական նպատակն է, թե՞ դա համարվում է միայն միջանկյալ խնդիր: Իր կարևորությամբ հանդերձ ճշմարտության բացահայտումը չի կարող համարվել քրեական գործով վարույթի վերջնական նպատակ: Դատավարությունը չի կարող ավարտվել ճշմարտության պարզումով: Յուրաքանչյուր գործով պետք է կայացվի վերջնական որոշում: Քրեական գործով վարույթի արդյունքում վերջնական որոշում կայացնելը քրեական դատավարության վերջնական նպատակն է: Ճշմարտության բացահայտումն այդպիսի որոշում կայացնելու նախադրյալ է, դրա օրինական, հիմնավորված և արդարացի լինելու անհրաժեշտ պայման: Այդ իսկ պատճառով քրեական գործով ճշմարտության բացահայտումն ինքնանպատակ չէ, այլ ընդամենը միջոց է հասնելու ընդգրկուն նպատակի, այն է քրեական դատավարության խնդիրների իրականացմանը: Մյուս կողմից չի կարելի համաձայնել այն տեսակետին (տես Мотовиловкер Я.О. О принципах объективной истины, презумпции невиновности и состязательности процесса. Ярославль,1978, էջ 24-27), որ ճշմարտության բացահայտումը նույնական է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պահանջին: Առաջինը ապացուցման նպատակն է, երկրորդը դրան հասնելու (ճշմարտությունը բացահայտելու) միջոցը:

[2] Տես Орлов Ю.К. Основы теории доказательств в уголовном процессе. М., 2000, էջ 13:

[3] Տես Պիվազյան Հ., Քրեական դատավարություն (ըստ ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի): Ընդհանուր մաս: Եր., 1989, էջ 258-261, ինչպես նաև Орлов Ю.К., նշվ. աշխ., էջ 22-23:

[4] Строгович М.С. Материальная истина и судебные доказательства в советском уголовном процессе. М., 1955, էջ 265:

ցուցման առարկայի տարրեր: Դրանք հաստատվում են միայն ապացույցների հիման վրա (ապացուցման միջոցով): Այսինքն քր. դատ. օր. 107 հոդվածը պահանջում է, որ ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների առկայության կամ բացակայության մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի հետևությունները հիմնվեն միայն ապացույցների վրա: Այդ հանգամանքների շրջանակը միաժամանակ որոշում է ապացույցների հավաքման և ստուգման սահմանները[5]:

Ապացուցման առարկայի վերաբերյալ մեղադրանքի կողմի և պաշտպանության կողմի տեսակետները, դիրքորոշումները, որպես կանոն (հիմնականում), չեն համընկնում: Ապացուցման առարկայի վերաբերյալ մեղադրանքի կողմի (քննիչի, դատախազի) դիրքորոշումը նախաքննության ընթացքում սովորաբար արտահայտվում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, մեղադրական եզրակացության ձևակերպումներում: Դրանցում արտահայտված հանգամանքները կազմում են մեղադրանքի առարկան: Այսինքն քր. դատ. օր. 107 հոդվածի պահանջները կազմում (որոշում) են մեղադրական եզրակացության բովանդակությունը:

Մեղադրանքի կողմի դիրքորոշմանը հակադարձում, դիմագրավում է պաշտպանության կողմի դիրքորոշումը (վարկածը), որն արտահայտվում է առաջադրված մեղադրանքի վերաբերյալ մեղադրյալի ցուցմունքներում, երբեմն նաև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ մեղադրանքը փոփոխելու միջնորդություններում: Այս վարկածին (դիրքորոշմանը) համապատասխանող հանգամանքները կազմում են պաշտպանության առարկան:

Պաշտպանության առարկան բավական տարողունակ հասկացություն է, որի բովանդակությունը կասկածյալին, մեղադրյալին մեղսագրվող հանգամանքների բացակայության պարզումն է: Ինչպես որ պաշտպանությունն ածանցվում է մեղադրանքից, այնպես էլ պաշտպանության առարկան ածանցվում է մեղադրանքի առարկայից: Այսպես, երբ մեղադրյալը հերքում է իր մեղավորությունը, ապա, որպես ապացուցման առարկա, պաշտպանի միակ հնարավոր դիրքորոշումը պաշտպանյալի անմեղությունը փաստելն է: Հակառակ պարագայում պաշտպանության ներսում առաջ կգա դիրքորոշումների բախում, ինչն անթույլատրելի է (տես քր. դատ. օր., հոդվ. 73, մաս 2 և մաս 4):

Առանձին դեպքերում պաշտպանության առարկան կարող է հանգել հանցակազմի որևէ տարրը (օրինակ սուբյեկտիվ կողմը) վիճարկելուն: Այսպես,

---

[5] Տես Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РСФСР. Под общей ред. В.М.Лебедева. Науч. ред. В.П.Божьев. М., 1995, էջ 102:

վիճարկելով դիտավորյալ սպանության մեղադրանքը (քր. օր., հոդվ. 104) պաշտպանության կողմը կարող է ապացուցել, որ իրականում անզգուշությամբ մահ է պատճառվել (քր. օր., հոդվ. 109) կամ առողջությանը ծանր վնաս պատճառելն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ (քր. օր., հոդվ. 112):

Պաշտպանության առարկան կարող է հանգել առաջադրված մեղադրանքում մատնանշված պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների առկայությունը վիճարկելուն (հերքելուն): Իսկ երբ մեղադրյալն իրեն մեղավոր է ճանաչում առաջադրված մեղադրանքում, պաշտպանության առարկան կարող է սահմանափակվել պաշտպանյալի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները պարզելով:

Որոշ դեպքերում պաշտպանության առարկան կարող է լինել քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող այս կամ այն հանգամանքի պարզումը (օրինակ անցել են վաղեմության ժամկետները. օրենքով նախատեսված դեպքերում բացակայում է տուժողի բողոքը. անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին. անձը քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից և այլն (քր. դատ. օր., հոդվ. 35)):

Մեկ այլ դեպքում պաշտպանության առարկան կարող է լինել այն հանգամանքների պարզումը, որոնք թույլ են տալիս չհարուցել քրեական գործ և չիրականացնել քրեական հետապնդում, կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը (քր. դատ. օր., հոդվ. 37):

Նկատենք, որ ապացուցման առարկայի վերաբերյալ քննիչի, դատախազի և պաշտպանի դիրքորոշումների լրիվ համընկնում հնարավոր է գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում:

Այսպիսով, պաշտպանության առարկան կազմում են այն հանգամանքները (ապացույցները), որոնք հիմք են ծառայում կասկածանքը և մեղադրանքը հերքելու, կասկածյալին և մեղադրյալին արդարացնելու, նրանց պատասխանատվությունը բացառելու կամ մեղմացնելու համար:

Ապացույցները դասակարգվում են տարբեր հիմքերով (չափանիշներով)[6]: Ապացույցների դասակարգումը կարևորվում է՝ առանձին ապացույցները բնութագրելու, համակարգելու և դրանք ճիշտ օգտագործելու նկատառումով:

---

[6] Տես, օրինակ Строгович М.С. Курс советского уголовного процесса. Т.1. М.,1968, էջ 372-391, Советский уголовный процесс. Под ред. Н.С.Алексеева и В.З.Лукашевича. Л.,1989, էջ 133-137, 156, Орлов Ю.К., նշվ. աշխ., էջ 107, Тетерин Б.С., Трошкин Е.З. Возбуждение и расследование уголовных дел. М., 1997, էջ 116:

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման տեսանկյունից (առումով) ապացույցները լինում են մեղադրող և արդարացնող: Եթե տվյալ ապացույցն ինքնին կամ այլ ապացույցների հետ միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցույց է տալիս մեղադրյալի կողմից հանցագործության կատարումը կամ նրա պատասխանատվությունը խստացնող հանգամանքները, նշանակում է՝ այն մեղադրող ապացույց է: Իսկ եթե տվյալ ապացույցը ցույց է տալիս, որ բացակայում է հանցագործության դեպքը, անձի արարքի մեջ հանցակազմ չկա, վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ, կասկածյալը կամ մեղադրյալն առնչություն չունի կատարված հանցագործությանը, ինչպես նաև մատնանշում է մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, նշանակում է՝ այն արդարացնող ապացույց է:

Ապացույցների այսպիսի դասակարգումն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական մեծ նշանակություն, մասնավորապես՝ գործի արդարացի քննության տեսանկյունից: Այսպես, քր. դատ. օր. 17 հոդվածի պահանջը գործի արդարացի քննության մասին կարող է իրականացվել միայն համապատասխան (մեղադրող և արդարացնող) ապացույցներ հավաքելու միջոցով: Միայն այս դեպքում կարող է բացահայտվել գործով ճշմարտությունը, կայացվել օրինական և հիմնավորված դատավճիռ կամ այլ վերջնական որոշում: «Ապացույցների նման դասակարգումը նպաստավոր պայմաններ է ստեղծում քննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունն ապահովելու, դատաքննչական մարմիններին մեղադրական թեքումով գործը վարելուց և նման այլ շեղումներից զերծ պահելու համար»[7]:

Այսպիսով, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հավաքել, ստուգել և գնահատել ինչպես մեղադրող, այնպես էլ արդարացնող ապացույցները: Գործի քննության ընթացքում հավաքված ապացույցները՝ թե մեղադրող և թե արդարացնող, պետք է հավասարապես արտացոլվեն մեղադրական եզրակացության, դատավճռի (որոշման) մեջ: Այնինչ պաշտպանության կողմը, նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, օգտագործում է արդարացնող ապացույցները:

---

[7] Պիվազյան Հ., Քրեական դատավարություն..., էջ 284: